



## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 26\_Լ**

22 ապրիլի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՝  
2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 18\_Լ ՈՐՈՇՄԱՄԲ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ  
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի փետրվարի 18-ի 18\_Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

- 1) Երկրաֆիզիկայի ու Ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնները Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վերակազմակերպելու արդյունքում կրճատել երկու հաստիք (ամբիոնի վարիչի մեկ և ավագ լաբորանտի մեկ հաստիք):
- 2) Աստվածաբանության ու Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոններն Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի վերակազմակերպելու արդյունքում կրճատել երկու հաստիք (ամբիոնի վարիչի մեկ և ավագ լաբորանտի մեկ հաստիք):
- 3) Ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների համար) ու Ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար) ամբիոնները Ռուսաց լեզվի ամբիոնի վերակազմակերպելու արդյունքում կրճատել 1,5 հաստիք (ամբիոնի վարիչի մեկ և ավագ լաբորանտի 0,5 հաստիք):
- 4) Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու Ֆինանսական մաթեմատիկայի ամբիոններն Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի

ամբիոնի վերակազմակերպելու արդյունքում կրճատել երկու հաստիք (ամբիոնի վարիչի մեկ և ավագ լաբորանտի մեկ հաստիք):

5) Ընդհանուր լեզվաբանության ու Հայոց լեզվի պատմության ամբիոնները Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վերակազմակերպելու արդյունքում կրճատել երկու հաստիք (ամբիոնի վարիչի մեկ և ավագ լաբորանտի մեկ հաստիք):

6) Սփյուռքագիտության ամբիոնը Հայոց պատմության ամբիոնին միացնելու արդյունքում կրճատել Սփյուռքագիտության ամբիոնի 1.5 հաստիք:

2. Սույն որոշումը հանդիսանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18\_Լ որոշման անբաժանելի մասը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտի հաջորդ օրվանից:

**Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝**

**Ս. Պապիկյան**

2022թ. ապրիլ «22»

Երևան